Ուսուցիչների կամավոր ատեստացիայի գնահատում

Սերոբ Խաչատրյան

Սիրվարդ Մամիկոնյան

Հասմիկ Հովհաննիսյան

Անոտացիա

Հետազոտությունը ներկայացնում է 2021 թվականին Հայաստանում փորձարկված ուսուցիչների կամավոր ատեստացիայի գործընթացը, դրա արդյունքները, ինչպես նաև հաջորդած փոփոխություններն իրավական փաստաթղթերում: Վերլուծվել են 7 առարկաներից անցկացված փորձարկման մասնակցության ցուցանիշներն ու արդյունքները, ուսուցիչների, փորձագետների հետ անցկացված հարցազրույցների հիման վրա բացահայտվել են կամավոր ատեստացիայի ընթացքում արձանագրված խնդիրները:

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԳԹԿ	Գնահատման և թեստավորման կենտրոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա **2**

Հապավումների ցանկ **3**

Ներածություն **5**

ԳԼՈՒԽ 1. Կամավոր ատեստացիայի փորձնական փուլի արդյունքների վերլուծություն .. **9**

Կամավոր ատեստացիային մասնակցության ցուցանիշները 9

Կամավոր ատեստացիայի արդյունքները 11

Արդյունքները՝ ըստ առարկաների 11

Արդյունքները՝ ըստ սեռի 14

Արդյունքները՝ ըստ դպրոցների տեսակի 14

Արդյունքները՝ ըստ դպրոցի վայրի 16

ԳԼՈՒԽ 2. Իրավական ակտերի և միջազգային փորձի վերլուծություն **19**

Եզրակացություններ **24**

Առաջարկություններ **26**

Հավելված 1. Խորին հարցազրույցի հարցաշարեր **28**

Հավելված 2. Հետազոտության շրջանակում ուսուցիչների հետ իրականացված խորին հարցազրույցի արդյունքները **29**

Գրականություն **35**

Աբստրակտ **36**

Abstract **36**

Ներածություն

Հանրակրթությունը, հատկապես ուսուցիչների իրավունքների պաշտպանությունը, ուսուցիչների կատարած աշխատանքի դիմաց ոչ համարժեք վարձատրությունը եղել են հանրության ուշադրության կենտրոնում:

Միջազգային փորձը (Sahlberg, 2015) վկայում է, որ կրթական համակարգի առաջընթացը մեծապես կախված է ուսուցիչներից: Ուսուցիչների կրթական որակն այն առանցքային գործոնն է, որը կարող է արմատապես ազդել կրթական համակարգի ցուցանիշների վրա: Ցավոք, անկախության տարիներին Հայաստանի ուսուցիչների մասնագիտական, սոցիալական խնդիրները տարեցտարի սրվեցին՝ հանգեցնելով ուսուցչի մասնագիտության հանդեպ հետաքրքրության կտրուկ նվազման, ուսուցիչների հանդեպ հանրային վստահության անկման:

Այս ամենի արդյունքում վերջին տարիներին Հայաստանում, հատկապես՝ գյուղական համայնքներում, նկատվում է ուսուցիչների պակաս, առարկաները դասավանդում են ոչ մասնագետ ուսուցիչներ[1]: Մանկավարժական բուհերում նվազել է դիմորդների թիվը: Հատկապես ֆիզիկա և քիմիա մասնագիտություններով դիմորդների թիվը գրեթե զրոյական է[2]: Շիրակի և Վանաձորի պետական համալսարաններում փակվել են Ֆիզիկայի և Քիմիայի ֆակուլտետները, իսկ 2022 թվականին մաթեմատիկա մասնագիտությամբ որևէ դիմորդ չի եղել[3]: Դիմորդների նվազում կա նաև մանկավարժական բուհերի ինֆորմատիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, ֆրանսերեն, գերմաներեն բաժիններում: Խնդիր է նաև այն, որ մանկավարժական բուհեր ընդունվում են ցածր միավորներով (երբեմն՝ 20 միավորից 7.5-8 միավոր հավաքելով): Սա նշանակում է, որ բավականին ցածր է ապագա ուսուցիչների մեծ մասի առարկայական իմացության մակարդակը:

2009 թվականին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում ներառվեց ուսուցիչներին տարակարգ շնորհելու մեխանիզմը[4]: Օրենքի հիման վրա 2011 թվականին Կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվեցին **հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները, որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկերը[5]: Այդ փաստաթղթի հիման վրա ներդրվեց ուսուցիչների տարակարգի քառաստիճան համակարգը, որը հնարավորություն տվեց ուսուցիչներին ստանալ 10-50 տոկոս հավելավճար: Ուսուցիչները հավելավճար կարող են ստանալ հոդվածներ, ձեռնարկներ, դասագրքեր հրատարակելու, նախարարության կողմից հաստատված որոշ ծրագրերում ընդգրկված լինելու, աշակերտների ձեռքբերումների դեպքում: Բացի տարակարգից, ուսուցիչները լրավճար ստանում են, եթե ունեն գիտական աստիճան:**

---

[1] ՀՀ Կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն, 2022: *Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի նախագիծ*, էջ 22
https://www.e-draft.am/projects/4013/justification

[2] ՀՊՄՀ, 2022: *Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի դիմորդների շարժը, 2022 թ.*
https://docs.google.com/spreadsheets/d/11754-1Z-BuFv68Zz9c_5uwWUy0fvDxgFKbgi2wzY2TQ/edit#gid=0

[3] panorama.am, 2022: *Դիմորդ չկա Կոնսերվատորիայի ազգային նվագարանների գործիքների՝ շվիի, սրնգի, տավղի բաժիններում. Կարո Նասիբյան*
https://bit.ly/3A24Kw5

[4] ՀՀ Ազգային ժողով, 2009: *Հայաստանի Հանրապետության օրենքը հանրակրթության մասին*, Երևան
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=71908

[5] Կրթության և գիտության նախարար, 2011: *Հրաման հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները և որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկերը հաստատելու մասին*, Երևան
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73647

2014 թվականին ԱՅԲ հիմնադրամի կողմից ներկայացված «Արարատյան բակալավրիատի» ծրագրով[6] նախատեսվում էր ուսուցիչների առարկայական, մանկավարժական հմտությունների ստուգման հիման վրա ընտրել 2000 ուսուցչի, որոնք պետք է ստանային բարձր աշխատավարձ, և յուրաքանչյուրը պետք է 10 այլ ուսուցչի համար դառնար մենթոր: Սակայն ծրագիրը 2018 թվականին դադարեցվեց[7], թեև արդեն որոշ դպրոցներ և ուսուցիչներ անցել էին ընտրության գործընթացի որոշ փուլեր:

2021 թվականին ԿԳՄՍ նախարարությունը փորձարկեց ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգը[8], որի նպատակն էր նպաստել ուսուցիչների աշխատավարձի բարձրացմանը և մասնագիտական զարգացմանը: Այս համակարգը 80-89 տոկոսի շեմը հաղթահարող ուսուցիչներին հնարավորություն էր տալիս ստանալ աշխատավարձի 30 հավելավճար, իսկ 90-100 տոկոս արդունք ցույց տված ուսուցիչների համար՝ 50 տոկոս: Ատեստացիայի փորձնական փուլին մասնակցեցին 7 առարկաների ուսուցիչներ: Մասնակցության ընդհանուր ցուցանիշը շատ ցածր էր: Առարկաների արդյունքներում արձանագրվեցին էական տարբերություններ, եղան մեծ թվով բողոքարկումներ, և գործընթացը բավականին մեծ հանրային հնչեղություն ստացավ[9][10]: Այս հետազոտության միջոցով փորձել ենք բացահայտել այդ տարբերությունների պատճառները, ինչպես նաև արդյունքները վերլուծել՝ ըստ դպրոցների տեսակների, մարզերի և առարկաների:

Հաշվի առնելով կամավոր ատեստացիայի գործընթացի կարևորությունը և դրա շուրջ ստեղծված հանրային հետաքրքրությունը՝ կրթության փորձագետ **Մերոբ Խաչատրյանը**, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան ՀԿ փորձագետներ **Միրվարդ Մամիկոնյանը և Հասմիկ Հովհաննիսյանը** նախաձեռնել են իրականացնել **«Ուսուցիչների կամավոր ատեստացիայի գնահատում»** թեմայով հետազոտությունը, որն իրականացվել է 2022 թվականի մարտ-մայիս ամիսներին Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ «Քաղաքականությունների վերլուծության և հետազոտության հնարավորություն» ծրագրի շրջանակում:

Հետազոտության **նպատակն էր** գնահատել ուսուցիչների կամավոր ատեստացիայի փորձնական փուլի ընթացքը և առաջարկել բարելավման քայլեր:

Հետազոտության խնդիրներն են.

1) Բացահայտել կամավոր ատեստացիային մասնակցության ցածր ցուցանիշի, առարկաների արդյունքների էական տարբերության պատճառները,
2) վերլուծել կամավոր ատեստացիայի արդյունքները՝ ըստ դպրոցների տեսակների, մարզերի և առարկաների:

---

[6] «Այբ» կրթական հիմնադրամ: *Արարատյան բակալավրիատ* http://araratbaccalaureate.am/

[7] Lragir.am, 2018: *Ավարտվել է «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ուսումնասիրությունը. ԿԳՆ* https://www.lragir.am/2018/12/27/406830/

[8] Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, 2021: *Հրաման սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին, Երևան* https://www.arlis.am/documentview.aspx?docid=149769

[9] ampop.am, 2021: *Ի՞նչ պարզվեց ուսուցիչների կամավոր ատեստավորման արդյունքում* https://ampop.am/voluntary-certification-of-teachers-in-armenia/

10 ՍիվիլՆեթ, 2021: *Ուսուցիչների կամավոր ատեստավորում. խնդիրների ստեղծո՞ւմ, թե՞ լուծում* https://www.youtube.com/watch?v=hT5FkbThoLA

Հետազոտության մեթոդաբանությունը.

1) Իրավական ակտերի և միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն։

Իրականացվել է փաստաթղթերի վերլուծություն՝ ի մի բերելով ոլորտին առնչվող գրականությունը, իրավական դաշտը, միջազգային փորձը, առկա փաստերը և այլն։ Իրավական դաշտի շրջանակում ուսումնասիրվել են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի 26 հունվարի 2021 թվականի N 21-Ն հրամանը, Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 28 ապրիլի 2022 թվականի N 596-Ն որոշումը։

Միջազգային փորձի ուսումնասիրության համար դիտարկվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Աշխատենք և սովորենք միասին» (2019 թ.) զեկույցը, որում ներկայացվում է շուրջ 4 տասնյակ երկրների կրթության ոլորտի փորձը։

1) Վիճակագրական տվյալների վերլուծություն

Վիճակագրական տվյալները դիտարկվել և վերլուծվել են՝ ըստ դպրոցների տեսակների, մարզերի, սեռի, դասավանդման առարկաների։

Կամավոր ատեստվորման փորձնական փուլի մասին վիճակագրական տվյալները տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը։ Օգտագործվել են նաև Վիճակագրության պետական կոմիտեի «Սոցիալական վիճակը ՀՀ-ում» զեկույցի տվյալները։

2) Որակական խորին հարցազրույցների իրականացում

Իրականացվել են հարցազրույցներ.

- ԿԳՄՍ նախարարության Գնահատման և թեստավորման կենտրոնի պաշտոնյայի, 2 դասախոսի, որոնք ի պաշտոնե կամ իրենց աշխատանքային գործունեության բերումով ակտիվորեն ներգրավված են եղել կամավոր ատեստացիայի գործընթացում։
- 28 անհատական խորին հարցազրույցներ են անցկացվել, որոնց մասնակցել են կամավոր ատեստացիային մասնակցած 24 և չմասնակցած 4 ուսուցիչներ Հարցազրույցներն իրականացվել են 2022 թվականի ապրիլի առաջին տասնօրյակում։ Ուսուցիչներին ընտրելիս հաշվի են առնվել մարզերի, դպրոցների տեսակների, առարկաների, սեռի, մանկավարժական ստաժի հանգամանքները։ Խորին հարցազրույցներն իրականացվել են առցանց՝ ըստ նախօրոք մշակված հարցաշարերի[11]։ Հարցազրույցների արդյունքները ամփոփվել և վերլուծվել են[12]։ Ուսուցիչներին ընտրության գործում մեզ աջակցել են Հելսինկյան կոմիտեի մարզային կամավորները, մարզային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։

Հետազոտություն իրականացնող խումբն իր շնորհակալությունն է հայտնում Եվրասիա համագործակցություն հիմնադրամին ծրագրին աջակցելու, ԿԳՄՍ նախարարությանը՝

[11] Տե՛ս Հավելված 1. Խորին հարցազրույցի հարցաշարեր

[12] Տե՛ս Հավելված 2. Հետազոտության շրջանակում ուսուցիչների հետ իրականացված խորին հարցազրույցի արդյունքները

փորձնական փուլի արդյունքները տրամադրելու համար, ինչպես նաև հարցումներին մասնակցած փորձագետներին և մանկավարժներին։

ԳԼՈՒԽ 1. Կամավոր ատեստացիայի փորձնական փուլի արդյունքների վերլուծություն

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հունվարի 26-ի հրամանով հաստատվեց սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը, որին հաջորդեց աշխատակարգի ընդունումը[13]:

Հրամանում ներկայացված են ծրագրի անհրաժեշտությունը, նպատակներն ու խնդիրները, ակնկալվող արդյունքները: Մասնավորապես նշվում է, որ անհրաժեշտ է ստեղծել համակարգ, որը.

1) հնարավորություն կտա բացահայտելու և խրախուսելու դպրոցում դասավանդող որակյալ ուսուցիչներին,
2) կխրախուսի երիտասարդ ուսուցիչների մուտքը դպրոց՝ միևնույն ժամանակ ապահովելով հարթ սերնդափոխություն,
3) հիմք կհանդիսանա ատեստավորման պարտադիր համակարգի բարելավման համար,
4) հիմք կհանդիսանա տարակարգերի շնորհման համակարգի բարելավման համար՝ հենվելով ուսուցիչների մասնագիտական ստանդարտների վրա,
5) հիմք կհանդիսանա ուսուցիչների պատրաստման գործընթացի բարելավման համար[14]:

Կամավոր ատեստացիայի գործընթացը ենթադրում է ուսուցչի առարկայական գիտելիքների ստուգում: Առարկայական գիտելիքները կարևորելը պայմանավորված է այն հանգամանքով, որ հատկապես վերջին տարիներին ուսուցիչ դարձած շրջանավարտները բուհ ընդունվել և ավարտել են ցածր միավորներով: Բացի այդ, առարկայական գիտելիքների ստուգումը թեստերի միջոցով շատ ավելի օբյեկտիվ է հնարավոր իրականացնել, քան, օրինակ, մեթոդամանկավարժական հմտությունների ստուգումը:

Կամավոր ատեստացիայի գիտելիքների ստուգման գործընթացն անցկացվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից (ԳԹԿ) կենտրոնացված ձևով, Երևան քաղաքում: Թեստի տևողությունը բոլոր առարկաների դեպքում եղել է 180 րոպե: ԳԹԿ-ի կայքում նախօրոք տեղադրվել են բոլոր առարկաների թեստերի ուղեցույցները[15]: Ուղեցույցերում նշվել են գնահատման չափանիշները, շատ ընդհանուր ձևով՝ թեմաների շրջանակը, թեստի լրացման վերաբերյալ խորհուրդներ: Ուղեցույցներում բոլոր առարկաների համար ներկայացված չեն եղել թեստերի նմուշներ:

Կամավոր ատեստացիային մասնակցության ցուցանիշները

Ըստ նախնական կանխատեսումների, որոնք արտացոլված են փորձնական ծրագրում, առաջին տարում ատեստավորմանը պետք է մասնակցեր 2070 ուսուցիչ, որոնցից 1590-ը պետք է

---

[13] Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, 2021: *Հրաման սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման աշխատակարգը հաստատելու մասին*, Երևան https://escs.am/files/files/2021-04-23/db0f13d1d376e2aa63e794bd1ff1ea57.pdf

[14] Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, 2021: *Հրաման N 21-Ն Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին,* Երևան https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=156878

[15] Գնահատման և թեստավորման կենտրոն: *Ուսուցիչների կամավոր ատեստացիայի քննության ուղեցույցներ* http://www.atc.am/level1_.php?id_2=212&id=47&cat_=1

հաղթահարեր հավելավճարի շեմը[16]: Սակայն ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ ներկայացրեց 1372 ուսուցիչ, որոնցից 996-ը, այսինքն՝ դիմած ուսուցիչների 72.6 տոկոսը, ներկայացան ատեստավորման:

Հետազոտության ընթացքում ուսուցիչների հետ անցկացված հարցազրույցները ցույց տվեցին, որ դիմորդների թիվը քիչ է եղել հետևյալ հիմնական պատճառներով.

1) ձախողման, հեղինակազրկման վախը,
2) քննության միջոցով աշխատավարձ բարձրացնելու պայմանը ուսուցիչների որոշ խմբի կողմից դիտարկվել է որպես խտրական մոտեցում, քանի որ տնտեսության այլ ոլորտներում աշխատակիցների աշխատավարձը քննության արդյունքներով չի բարձրացվում,
3) հիմնական դպրոցների ուսուցիչների մոտ եղել է մտավախություն, որ իրենք մոռացել են, չեն տիրապետում ավագ դպրոցի ծրագրին,
4) գործընթացի անորոշությունը,
5) երիտասարդ ուսուցիչների շրջանում համարձակության պակասը:

Մեր կողմից հարցված 28 ուսուցիչներից միայն 2-ն ունեին մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ: Հարցման ժամանակ մասնակիցները նշում էին, որ իրենց դպրոցի երիտասարդ ուսուցիչները չհամարձակվեցին մասնակցել:

Առաջին տարում կամավոր ատեստացիային մասնակցելու իրավունք ուներ 15746 ուսուցիչ և դասավանդող[17]: Փաստացի մասնակցել է 996 ուսուցիչ, ինչը կազմում է մասնակցելու հնարավորություն ունեցողների 6.3 տոկոսը:

Աղյուսակ 1. Ըստ առարկաների մասնակցության ցուցանիշները

Առարկա	Ուսուցիչների, դասավանդողների թիվը	Մասնակցած ուսուցիչների, դասավանդողների թիվը	Մասնակցության տոկոսը
Հայոց լեզու և գրականություն	3773	303	8
Հայոց պատմություն	2335	108	4.6
Մաթեմատիկա	4177	241	5.8
Ֆիզիկա	1532	81	5.3
Քիմիա	1219	90	7.4
Կենսաբանություն	1367	89	6.5
Աշխարհագրություն	1343	84	6.2

[16] Նախնական տարբերակում այդ շեմն առաջադրանքների առնվազն 80 տոկոսի կատարումն էր:
[17] Ըստ ԿՏԱԿ-ի դասակարգման՝ դասավանդող են համարվում դպրոցի վարչական աշխատողները, որոնք նաև դասավանդում են:

Այսպիսով, մասնակցության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է հայոց լեզու և գրականություն (8 տոկոս), քիմիա առարկաներից (7.4 տոկոս), իսկ ամենացածրը՝ հայոց պատմություն (4.6 տոկոս), ֆիզիկա առարկաներից (5.3 տոկոս)։

Կամավոր ատեստացիայի արդյունքները

Ատեստացիային մասնակցած 996 ուսուցչից 481-ը (որից 13-ը բողոքարկման արդյունքում[18]) հաղթահարել է 70-100 տոկոսի շեմը և հավելավճար ստացել: Եվս 168 ուսուցիչներ ստացել են 60-69 տոկոս արդյունք և համարվում են ատեստավորումը հաղթահարած, բայց հավելավճար չեն ստանալու: 346 ուսուցիչներ ստացել են 0-59 տոկոս արդյունք։

Հավելավճար ստացողների թիվը շատ ավելի քիչ կլիներ, եթե նախարարի հրամանում փոփոխություն չկատարվեր։ Բանն այն է, որ նախարարի հրամանով նախատեսված էր, որ 70-79 տոկոս հավաքած ուսուցիչները հավելավճար չեն ստանա, բայց կհամարվեն ատեստավորված, 80-89 տոկոս արդյունք ցույց տված ուսուցիչները կստանան հավելավճար՝ 30 տոկոսի չափով, իսկ 90 տոկոս և ավելի արդյունք ցույց տված ուսուցիչները՝ 50 տոկոսի չափով: Փորձնական փուլի արդյունքում փոփոխություն կատարվեց կամավոր ատեստավորման կարգում և սահմանվեց ատեստավորման համար անցողիկ համարվող միավորների նոր՝ ավելի ցածր սանդղակ: Կատարված փոփոխության համաձայն՝ 70-79 տոկոս արդյունք ցույց տված ուսուցիչների համար սահմանվեց հավելավճար՝ 30 տոկոսի չափով, 80-89 տոկոս արդյունքի դեպքում՝ 40 տոկոսի չափով, իսկ 90-100 տոկոս արդյունքի դեպքում՝ 50 տոկոսի չափով: Իսկ 60-69 տոկոս ստացած մասնակիցները համարվեցին ատեստավորված՝ առանց հավելավճարի։

Արդյունքները՝ ըստ առարկաների

Ըստ նախարարի հրամանի՝ 2021 թվականին ատեստավորմանը կարող էին մասնակցել 7-12-րդ դասարաններում «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն»), «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաները դասավանդող ուսուցիչները[19]:

Աղյուսակ 2. Հավելավճարի շեմը հաղթահարած ուսուցիչների թիվը՝ ըստ առարկաների

Առարկա	Մասնակցել են	70 տոկոսի շեմը հաղթահարած ուսուցիչների թիվը	70 տոկոսի շեմը հաղթահարած ուսուցիչների տոկոսը
Հայոց լեզու և գրականություն	303	124	41
Հայոց պատմություն	108	39	36
Մաթեմատիկա	241	217	90
Ֆիզիկա	81	45	56
Քիմիա	90	11	12

[18] ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 2021: *Ամփոփվել են կամավոր ատեստավորման տվյալներն ու բողոքարկման արդյունքները,* Երևան https://escs.am/am/news/10522?fbclid=IwAR2bb4a3JLN1rA7uKmwwWJBpg_lQSF755pSvbe-zElb6aZEPGLItGAuOMZc

[19] ԿԳՄՍ-ի կողմից մեզ տրված տվյալների բազան պարունակում է տվյալներ 468 ուսուցչի մասին:

Կենսաբանություն	89	23	26
Աշխարհագրություն	84	17	20

Աղյուսակից երևում է, որ ըստ առարկաների՝ արձանագրվել են բավականին անհամաչափ, բևեռացված արդյունքներ: «Մաթեմատիկա» առարկայից 70 տոկոսի շեմը հաղթահարել է մասնակիցների 90 տոկոսը, իսկ «Քիմիա»-ից՝ մասնակիցների 12 տոկոսը: Ցածր են նաև «Աշխարհագրություն» (20 տոկոս), «Կենսաբանություն» (26 տոկոս) առարկաների ուսուցիչների ցուցանիշները: Ներկայացնենք հարցազրույցների ընթացքում տարբեր առարկաների ուսուցիչների արտահայտած մի քանի կարևոր դիտարկումներ:

Հատկապես մտահոգիչ են «Քիմիա» առարկայի ուսուցիչների, դասախոսների կարծիքները, Ի դեպ, բողոքարկումների ամենամեծ թիվը եղել է հենց «Քիմիայից»: Ըստ ԳԹԿ ներկայացուցչի՝ «բողոքներ և վերահաշվարկի դիմումներ են ստացվել «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Աշխարհագրություն» և «Քիմիա» առարկաներից, ընդ որում՝ ամենից շատ բողոքներ ստացվել են «Քիմիա» առարկայից՝ 65 դիմում-բողոք»[20]: Մեր հարցման ընթացքում «Քիմիա» առարկայի վերաբերյալ ուսուցիչները նշել են, որ թեստերում կային նաև ավագ դպրոցի ծրագրից դուրս հարցեր: Այս մասին մի ուսուցչուհի նշել է, որ՝ «*Հարցերի կեսից ավելին ոչ ծրագրային էր: Շեշտը դրված էր թերմոդինամիկայի վրա, որը դպրոցում մենք ընդամենը 1 դաս ենք անցնում, այն էլ թռուցիկ»:* Բացի այդ, նրանք նշել են, որ «*շատ խրթին էին ձևակերպումները, պետք է մի 3-4 անգամ կարդայինք, որ պատկերացնեինք պահանջը և թե ինչ պատասխան դուրս բերեինք*»: Քիմիայի մի ուսուցչուհի էլ նշել է. «…*Ասես գրողը հայ չլիներ: Ժամանակի մեծ մասը գնում էր վերծանելու համար»*:

Կային հաշվարկային սխալներ, կար հարց, որը ճիշտ պատասխան չուներ: Մի ուսուցիչ նշել էր, որ «…շատ անփույթ թեստ էր, բազմապատկումն ու հանածն այնպես էին գրված, որ բոլորը հանած էր երևում: Բացի այդ, եթե ես խնդրի քիմիական մասը ճիշտ եմ լուծել, ի՞նչ իմաստ ունի այն ծանրացնել թվաբանական հաշվարկներով»:

Փորձագիտական հարցման ընթացքում հաստատվել է «Քիմիա» առարկայի առաջադրանքներում առկա սխալների մասին ուսուցիչների կարծիքը: Բողոքարկման գործընթացին մասնակցած փորձագետի կարծիքով՝ այդ առաջադրանքներում իրոք եղել են խնդիրներ: Բացի թեստի որակից, նման ցածր արդյունքների պատճառը փորձագետը տեսնում է դպրոցներում լաբորատորիաների պակասի, առարկայի հանդեպ անտարբերության, հիմնական դպրոցների ուսուցիչների՝ ավագ դպրոցի ծրագրին լավ չտիրապետելու մեջ:

Կամավոր ատեստացիայի գործընթացի կազմակերպիչ ԳԹԿ ներկայացուցիչը նույնպես ընդունել է թեստի ծավալուն լինելու, առաջադրանքներում առկա վրիպակների փաստը, սակայն նշել է, որ ուսուցիչներին տրվել է լրացուցիչ մեկ ժամ, իսկ վրիպակների հետ կապված խնդիրները լուծվել են բողոքարկման ժամանակ՝ հօգուտ ուսուցիչների:

«Ինքս փորձել եմ լուծել քիմիայի թեստը: Բայց 3 ժամում չհասցրեցի: Շատ ծավալուն էին առաջադրանքները», ասել է ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի դասախոսը:

Մնացած առարկաների առաջադրանքներում նույնպես եղել են խնդիրներ:

---

[20] ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 2021: *Ամփոփվել են կամավոր ատեստավորման տվյալներն ու բողոքարկման արդյունքները*, Երևան https://escs.am/am/news/10522

«Իմ աշխատանքը կազմել էր 60 տոկոս, բողոքարկումից հետո դարձավ 77.8 տոկոս։ Այդքան սխալ և անճշտություն կար թեստերում։ Կարող էին ավելի լավ թեստ կազմել»,— «Կենսաբանություն» առարկայի ուսուցիչ։

«Այնպիսի հարցեր կան, որ պարտադիր չէ իմանալ։ Օրինակ՝ ես չեմ էլ պատրաստվում սովորել, թե ում ելույթը որ թերթում կամ ինչի համար է տպագրվել։ Կամ «Զորի Բալայանի ելույթը ԽՄԿԿ նիստում» որ թերթում է տպագրվել, որ իրադարձությունից հետո է տպագրվել...»,— պատմության ուսուցիչ։

Եվս մեկ օրինակ «Պատմություն» առարկայի քննությունից. «Քաղաքի պաշտպանության մասին մեջբերում է, վերջում գրված է՝ ո՞ր քաղաքի պաշտպանության մասին է խոսքը։ Տարբերակներից մեկը նշված է՝ Արատտա։ Ես հենց սկզբից բացառեցի այդ տարբերակը, բայց վերջում պարզվեց, որ Արատտան է։ Բայց այսքան ժամանակ մենք գիտենք, որ Արատտան պետություն է՝ վաղ պետական կազմավորում ՔԱ 28-27-րդ դարեր, այլ ոչ թե քաղաք։ Նման զարմանալի հացեր շատ կային»,— պատմության ուսուցիչ։

Հարցմանը մասնակցած բոլոր ուսուցիչները դժգոհել են թեստերի որակից և լեզվից, առաջադրանքների ծավալի և հատկացված ժամաքանակի անհամապատասխանությունից։ Առաջադրանքների որակից չեն դժգոհել միայն «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաների ուսուցիչները։

Ի դեպ, ուսուցիչները միաձայն պնդում էին, որ այս առաջադրանքները հեշտությամբ կարողանում էին հաղթահարել կրկնուսույցները։ Կամավոր ատեստացիային և մեր հարցմանը մասնակցած 24 ուսուցիչներից 17-ը հաղթահարել էին անցողիկ շեմը, որոնցից 14-ը եղել են կրկնուսույց։

Աղյուսակ 3. Հավելավճարի շեմը հաղթահարած ուսուցիչների թիվը՝ ըստ առարկաների և միավորների

Առարկա	70-79 տոկոս հավաքած ուսուցիչների թիվը	80-89 տոկոս հավաքած ուսուցիչների թիվը	90-100 տոկոս հավաքած ուսուցիչների թիվը
Հայոց լեզու և գրականություն	55	62	7
Հայոց պատմություն	21	12	6
Մաթեմատիկա	19	48	150
Ֆիզիկա	18	17	10
Քիմիա	6	3	2
Կենսաբանություն	19	4	0
Աշխարհագրություն	14	3	0
Ընդամենը	152	149	175

Թեստաբանության մեջ ընդունված է, որ առավելագույն միավորներ ստացող մասնակիցների թիվը պետք է քիչ լինի։ Մասնավորապես, տրամաբանական կլիներ, եթե ավելի շատ ուսուցիչներ հավաքեին 70-79, 80-89 տոկոս արդյունք, քան 90-100 տոկոս։ Այս սկզբունքը գործել է բոլոր առարկաների դեպքում, բացի «Մաթեմատիկա»-ից։ 90-100 տոկոս ստացած ուսուցիչների 85

տոկոսը «Մաթեմատիկա» առարկայի ուսուցիչներ են: «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներից ոչ մի ուսուցիչ չի ստացել 90-ից բարձր արդյունք: Ավելին, «Աշխարհագրություն» առարկայից ամենաբարձր արդյունքը եղել է 82.5 տոկոսը, իսկ «Կենսաբանություն»-ից՝ 87.1 տոկոսը: «Մաթեմատիկա» առարկայի քննական տվյալներում առկա է ևս մեկ ոչ բնական արդյունք: Այս առարկայից դրական միավորի շեմը հաղթահարած ուսուցիչների շուրջ 70 տոկոսը ստացել է 90-100 միավոր: Օրինաչափ կլիներ, եթե ավելի մեծ լիներ 70-89 ստացած ուսուցիչների թիվը:

Արդյունքները՝ ըստ սեռի

Հայաստանում առկա է տղամարդ ուսուցիչների պակաս: Ըստ Վիճակագրության պետական կոմիտեի տվյալների՝ Հայաստանի ուսուցիչների 89.2 տոկոսը կանայք են, 10.8 տոկոսը՝ տղամարդիկ[21]: Ատեստավորման փորձնական փուլի 7 առարկաների պարագայում կանանց թիվը ավելի մեծ է՝ շուրջ 91 տոկոս:

Աղյուսակ 4. Ատեստացիայի արդյունքները՝ ըստ սեռի

Սեռը	7 առարկաների ուսուցիչների, դասավանդողների տոկոսը	Դրական շեմը հաղթահարած ուսուցիչների, դասավանդողների տոկոսը
Կին	91	82.4
Տղամարդ	9	17.6

Աղյուսակից երևում է, որ ատեստավորման արդյունքում 70 տոկոսի շեմը հաղթահարած ուսուցիչների 82.4 տոկոսը կանայք են, 17.6 տոկոսը՝ տղամարդիկ: Սակայն «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից ոչ մի տղամարդ ուսուցիչ չի հաղթահարել 70 տոկոսի շեմը: Ընդհանուր առմամբ, դրական շեմը հաղթահարել է 82 տղամարդ ուսուցիչ, որոնցից 57-ը «Մաթեմատիկա» են դասավանդում, 14-ը՝ «Ֆիզիկա»: Այս արդյունքները վկայում են, որ թեև ուսուցիչների ընդհանուր մասնաբաժնի համեմատ տղամարդիկ ավելի լավ արդյունք են ցույց տվել, քան կանայք, այդուհանդերձ, դրական շեմը հաղթահարած տղամարդ ուսուցիչների թիվը չափազանց փոքր է, որոշ առարկաների դեպքում՝ զրո կամ գրեթե զրո:

Արդյունքները՝ ըստ դպրոցների տեսակի

Մինչև 2009 թվականը Հայաստանի դպրոցների մեծ մասն իրականացնում էր կրթության բոլոր աստիճաններին (տարրական, հիմնական, միջնակարգ) համապատասխան կրթություն: Սակայն 2009 թվականից սկսած դպրոցները բաժանվեցին 3 խմբի: Գյուղական դպրոցների մեծ մասը մնաց միջնակարգ, իսկ քաղաքային դպրոցները բաժանվեցին հիմնական (1-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) դպրոցների: Կամավոր ատեստացիայի թերևս ամենաշատ քննարկված հարցերից մեկն այն է, թե արդյոք բոլոր դպրոցների ուսուցիչները պետք է հանձնեն նույն թեստերը: Ատեստացիայի փորձնական փուլի արդյունքները ցույց են տալիս, որ հատկապես ցածր են հիմնական դպրոցի ուսուցիչների արդյունքները: Խնդիրն այն է, որ հիմնական դպրոցներում ուսուցիչները դասավանդում են մինչև 9-րդ դասարան, իսկ ատեստավորման ժամանակ լինում են նաև առաջադրանքներ ավագ դասարանների ծրագրից: Այս պատճառով մեր հարցմանը մասնակցած ուսուցիչները նշում են, որ հիմնական դպրոցի ուսուցիչներին պետք է ստուգել միայն

[21] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2020: *Հայաստանի սոցիալական վիճակը 2020 թվականին*
https://www.armstat.am/file/article/soc_vich_2020_2.pdf

հիմնական դպրոցի ծրագրով, քանի որ նրանցից շատերը երբևէ չեն դասավանդել 10-12-րդ դասարաններում կամ դասավանդել են 10-15 տարի առաջ, երբ հիմնական և ավագ դպրոցները տարանջատված չէին: Նախարարության փաստարկն այն է, որ ուսուցիչները բուհն ավարտելիս ստացել են տվյալ առարկայի ուսուցչի որակավորում՝ առանց կրթության աստիճանների տարբերակման, հետևաբար, նրանք պարտավոր են իմանալ դպրոցի ծրագիրն ամբողջությամբ: Սակայն հաշվի առնելով, որ Հայաստանում 12-ամյա կրթության անցնելուց հետո փոխվել է ավագ դպրոցի ծրագիրը՝ մինչև այս փոփոխությունը բուհն ավարտած ուսուցիչները կարող էին չիմանալ ավագ դպրոցի նոր ծրագրի որոշ թեմաներ: Ամեն դեպքում, այստեղ խնդիր կա:

Ստորև ներկայացնենք, թե ինչ արդյունքներ են արձանագրվել ատեստացիայի ժամանակ՝ ըստ դպրոցների տեսակների: Մենք դպրոցները բաժանել ենք 4 տեսակի՝ միջնակարգ (1-12-րդ դասարաններ), հիմնական (1-9-րդ դասարաններ), ավագ (10-12-րդ դասարաններ) և վարժարաններ (բուհերի ենթակայությամբ գործող ուսումնական հաստատություններ, հայտնի պետական դպրոցներ՝ Ֆիզմաթ, Ֆոտոն):

Գծապատկեր 1. 70% անցողիկ շեմը հաղթահարած ուսուցիչների թիվը՝ ըստ դպրոցի տեսակի



Աղյուսակ 5. Կամավոր ատեստացիայի արդյունքները՝ ըստ դպրոցների տեսակի

	Պետական դպրոցների թիվը	70 տոկոսի շեմը հաղթահարած ուսուցիչների թիվը
1. **Միջնակարգ դպրոց**	770	149
2. **Հիմնական դպրոց**	461	94
3. **Ավագ դպրոց**	101	159
4. **Վարժարան**	10	66

Աղյուսակից ակնհայտ երևում է, որ համամասնության տեսանկյունից հիմնական և միջնակարգ դպրոցների արդյունքները չափազանց ցածր են ավագ դպրոցների և վարժարանների համեմատ: Հայաստանի միջնակարգ դպրոցների թիվը գրեթե 7.7 անգամ ավելի մեծ է ավագ դպրոցների թվից:

Սակայն 70 տոկոսի շեմը հաղթահարած ավագ դպրոցների ուսուցիչների թիվն ավելի շատ է: Վարժարանների թիվն անհամեմատ փոքր է հիմնական և միջնակարգ դպրոցների թվից, սակայն վարժարանների բավական մեծ թվով ուսուցիչներ կարողացել են հաղթահարել 70 տոկոսի շեմը: Հայաստանի դպրոցների շուրջ 33 տոկոսը հիմնական են, սակայն ատեստավորումը հաղթահարած ուսուցիչների միայն 20 տոկոսն են հիմնական դպրոցներից: Համեմատության համար նշենք, որ Հայաստանի դպրոցների միայն 7 տոկոսն են ավագ, սակայն ատեստավորումը հաղթահարած ուսուցիչների 34 տոկոսն ավագ դպրոցից են: Ըստ այս տվյալների՝ միջինում մեկ ավագ դպրոցից դրական շեմը հաղթահարել է շուրջ 1.5 ուսուցիչ, մեկ վարժարանից 6.6 ուսուցիչ, մեկ հիմնական դպրոցից՝ 0.2 ուսուցիչ, մեկ միջնակարգ դպրոցից՝ 0.19 ուսուցիչ: Եթե այս հարցին լուծում չտրվի, ապա առաջիկայում կամավոր ատեստացիայի ֆինանսական հոսքերի առյուծի բաժինը գնալու է դեպի ավագ դպրոցներ և վարժարաններ՝ խորացնելով ռեսուրսների բաշխման անհամաչափությունը:

Գծապատկեր 2. Ուսուցիչների թիվը՝ ըստ դպրոցների տեսակների և շեմերի



Այս գծագրից ևս երևում է, որ ավագ դպրոցների և վարժարանների ուսուցիչների ավելի մեծ թիվ հաղթահարել է 90-100 տոկոսի շեմը: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ միջնակարգ դպրոցների առյուծի բաժինը գյուղերում է, այս տվյալները վկայում են նաև գյուղ-քաղաք անհավասարությունների մասին:

Արդյունքները՝ ըստ դպրոցի վայրի

Հայաստանի կրթական համակարգի խնդիրներից մեկն անհամաչափ զարգացումն է: ԳԹԿ-ի կողմից տարիներ շարունակ անցկացված արտաքին գնահատումները[22] վկայում են, որ հատկապես

[22] Գնահատման և թեստավորման կենտրոն, 2019: *2019 թ. հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի արդյունքների ընդհանուր վերլուծություն* http://www.atc.am/files/verlucutyunner/Azgain%20stugates/HAAS_2019..pdf

գյուղական դպրոցներում սովորող երեխաներն ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն ստանալու որակյալ կրթություն:

Աղյուսակ 6. 70 տոկոսի շեմը հաղթահարած ուսուցիչների թիվը՝ ըստ դպրոցի վայրի

Առարկա	Գյուղական դպրոց	Քաղաքային դպրոց	Երևան
Հայոց լեզու և գրականություն	44	50	30
Հայոց պատմություն	8	23	8
Մաթեմատիկա	71	82	57
Ֆիզիկա	9	20	16
Քիմիա	2	7	1
Կենսաբանություն	3	17	3
Աշխարհագրություն	10	7	0
Ընդամենը	147 (31.4%)	206 (44%)	115 (24,6%)

Աղյուսակից պարզ է դառնում, որ կամավոր ատեստացիան հատկապես հաջողությամբ են հաղթահարել մարզային քաղաքների ուսուցիչները (44 տոկոս): Հատկապես մտահոգիչ են Երևանի արդյունքները «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից: Երևանի քաղաքից Աշխարհագրության ոչ մի ուսուցիչ չի հաղթահարել 70 տոկոսի շեմը: Ի դեպ, Աշխարհագրությունը միակ առարկան է, որտեղ լավագույն արդյունքը ցույց են տվել գյուղական դպրոցի ուսուցիչները: Նշենք, որ Հայաստանի 1354 պետական դպրոցներից 858-ը գտնվում են գյուղերում, 543-ը քաղաքներում (որից 211-ը Երևանում): Թեև Երևանի դպրոցների թիվը փոքր է, այդուհանդերձ, աշակերտների թիվը Հայաստանի աշակերտների թվի շուրջ 1/3-րդն է, ուսուցիչների թվի՝ շուրջ 25 տոկոսը:

Այդուհանդերձ, Երևանը լավագույնն է մարզային կտրվածքով: Ատեստավորված ուսուցիչների 24.6 տոկոսը Երևանից է: Երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 12.8 տոկոս ցուցանիշով, երրորդ տեղում Կոտայքի մարզն է՝ 10.7 տոկոս ցուցանիշով: Ի դեպ, եթե հաշվի առնենք դպրոցների թիվը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Երևանի ու Շիրակի բարձր արդյունքները հիմնականում ապահովվել են վարժարանների, համալսարանների ենթակայությամբ գործող դպրոցների միջոցով, ապա կարող ենք ասել, որ հանրակրթական դպրոցների մակարդակով լավագույն արդյունքը Կոտայքի մարզինն է, որտեղ բոլոր ուսուցիչները սովորական դպրոցներից են: Երևանի ուսուցիչներից 36-ը, Շիրակի մարզի ուսուցիչներից 28-ը վարժարանների ուսուցիչներ են: Ի դեպ, Կոտայքի մարզը միակն է, որտեղ հիմնական դպրոցներից ատեստացիան հաղթահարած ուսուցիչների թիվը պակաս չէ ավագ դպրոցների ուսուցիչների թվից:

Աղյուսակ 7. Ատեստավորումը հաղթահարած ուսուցիչների թիվը, տոկոսը և դպրոցների թիվը՝ ըստ մարզերի

Մարզը	Ատեստավորումն անցած ուսուցիչների թիվը, տոկոսը	Դպրոցների թիվը
1. **Երևան**	115 (24,6%)	211

2. Շիրակ	60 (12.8%)	159
3. Կոտայք	50 (10.7%)	101
4. Գեղարքունիք	42 (9 %)	124
5. Արմավիր	41 (8.8 %)	118
6. Լոռի	39 (8.3 %)	163
7. Սյունիք	38 (8.1 %)	117
8. Արարատ	30 (6.4 %)	112
9. Տավուշ	27 (5.8 %)	81
Արագածոտն	19 (4.1%)	120
Վայոց ձոր	7 (1.5 %)	48

Ուսուցիչների հետ անցկացված հարցազրույցների ժամանակ մի քանի մասնակիցներ նշել են, որ ցանկալի կլինի՝ քննություններն անցկացվեն նաև մարզերում, քանի որ հատկապես հեռավոր մարզերից եկած ուսուցիչները հոգնած են ներկայանում թեստավորման։

ԳԼՈՒԽ 2. Իրավական ակտերի և միջազգային փորձի վերլուծություն

2022 թվականի փետրվարի 9-ին Ազգային ժողովն ընդունեց «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որով օրենսդրական ամրագրում ստացավ կամավոր ատեստացիայի գործընթացը: Օրենքի փոփոխության մեջ նշված է, որ «կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է ուսուցչի դրույքաչափի փոփոխության և հինգ տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար»[23]: Այս փոփոխությամբ ամրագրվեց, որ կամավոր ատեստացիայի շեմը հաղթահարած ուսուցիչները ստանալու են ավելի բարձր աշխատավարձ: 2022 թվականի ապրիլի 28-ի ՀՀ կառավարության որոշմամբ[24] սահմանվեց ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը (այսուհետ՝ Կարգ): Կարգի համաձայն, «սահմանված արդյունք ցուցաբերած ուսուցիչների դրույքաչափը փոխվում է՝ սահմանվելով 200 հազար դրամ՝ մեկ դրույք զբաղվածության համար, որի նկատմամբ կիրառվում է համապատասխան չափով հավելավճարը»[25]: Այսպիսով՝ 70-79 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցչի աշխատավարձը դառնում է 260 հազար ՀՀ դրամ, 80-89 տոկոս արդյունքի դեպքում՝ 280 հազար ՀՀ դրամ, 90-100 տոկոս արդյունքի դեպքում՝ 300 հազար դրամ: 2022 թվականի մայիսի 1-ից որոշումը տարածվեց նաև 2021 թվականի կամավոր ատեստավորման արդյունքում 70-100 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների դրույքաչափի վրա[26]: Այս ամենին զումարվում են նաև տարակարգի համար նախատեսված հավելավճարները, որոնք հնարավորություն են տալիս ուսուցչին ևս 10-50 տոկոս հավելավճար ստանալ: Գործում է 4 տարակարգ, որոնք տրվում են ուսուցիչներին հոդվածներ, ձեռնարկներ, դասագրքեր հրատարակելու, վերապատրաստումներ իրականացնելու և նմանտիպ այլ մեթոդական ձեռքբերումների համար:

2022 թվականից սկսած ուսուցիչները կամավոր ատեստացիայի կարող են դիմել էլեկտրոնային ձևով, ինչը հնարավորություն կտա ապահովել գաղտնիություն: Նախորդ տարի ուսուցիչները պետք է դիմեին տնօրենի իմացությամբ:

Միջազգային պրակտիկայում կարևոր հարց է, թե որքան պետք է խրախուսվեն ուսուցիչները, որքան պետք է լինի աշխատավարձերի տարբերությունը: Հայաստանի պարագայում, կամավոր ատեստացիան հաղթահարած, տարակարգ ունեցող ուսուցիչների և մյուս ուսուցիչների աշխատավարձի միջև տարբերությունը շատ մեծ է ստացվում: Միջազգային փորձի

---

[23] ՀՀ Ազգային ժողով, 2022: *Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*, Երևան https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=160449

[24] ՀՀ կառավարություն, 2022: *Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 596-Ն «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին»,* Երևան https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162427

[25] Նույն տեղում:

[26] ՀՀ կառավարություն, 2022: *Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 596-Ն «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին»*, կետ 2, Երևան https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162427

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Չիլիում, Հունգարիայում, Իսրայելում, Անգլիայում ամենաբարձր վարձատրվող ուսուցչի աշխատավարձը 150 տոկոսով է բարձր սկսնակ ուսուցչի աշխատավարձից: Կոլումբիայում և Մեքսիկայում ամենաբարձր վարձատրվող ուսուցիչները 3 անգամ են ավելի շատ ստանում սկսնակներից (OECD, 2019, p. 137): Հայաստանում կամավոր ատեստացիան հաղթահարած, բարձրագույն 4-րդ տարակարգ ունեցող ուսուցիչը ստանալու է 400 հազար դրամ աշխատավարձ, իսկ կամավոր ատեստացիա չանցած, տարակարգ չունեցող ուսուցիչը 108 հազար դրամ: Այսինքն՝ տարբերությունը գրեթե 4 անգամ է:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) տվյալների համաձայն, կրթական համակարգերը փորձում են մի կողմից բարձրացնել մեկնարկային աշխատավարձը, որպեսզի նորավարտ շրջանավարտներին գրավեն, մյուս կողմից փորձում են աճողական աշխատավարձի միջոցով խրախուսել համակարգում աշխատող փորձառու, բարձրակարգ ուսուցիչներին (OECD, 2019, p. 139): Հայաստանը ֆինանսական ամբողջ ռեսուրսն ուղղեց կամավոր ատեստացիային և տարակարգին (OECD, 2019, p. 146): Իհարկե, այստեղ խնդիր է դասերի դիտարկման օբյեկտիվ ցուցիչների մշակումը:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքով ամրագրված է, որ «հերթական և կամավոր ատեստավորման հանձնաժողովների՝ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար»: Կարգում նշվում է, որ եթե ուսուցիչը կամավոր ատեստացիայի արդյունքում ստանում է 0-59 տոկոս, ապա պետք է մասնակցի պարտադիր ատեստացիայի: Ըստ Կարգի՝ «երկրորդ տարում վերաատեստավորումը չանցած ուսուցիչն ազատվում է զբաղեցրած պաշտոնից»: Այսպիսով, ցածր արդյունք ունենալու և վերաատեստացիան չհաղթահարելու դեպքում, ուսուցչին կարող են ազատել աշխատանքից: Իհարկե, այս կետը կարող է շատ ուսուցիչների վախեցնել, ինչի արդյունքում նրանք կարող են չդիմել կամավոր ատեստացիայի: Կարգի 78-րդ կետում նշվում է, որ 0-59 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների համար «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան, կազմակերպվում է առարկայական պարտադիր վերապատրաստում: Մինչդեռ օրենքի այդ մասը ուսուցչի հերթական ատեստավորման (օգտագործվում է նաև պարտադիր ատեստավորում արտահայտությունը) մասին է: Իսկ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշչի և օրինակելի ծրագրի»[27] համաձայն, հերթական ատեստավորման ծրագրի վերջնարդյունքներում առարկայական գիտելիքների զարգացումը չի համարվում առաջնահերթություն: Ավելի մեծ ուշադրություն է դարձվում ուսուցչի մեթոդական վերապատրաստմանը: Հետևաբար, հասկանալի չէ, թե հերթական ատեստավորմանը մասնակցելը ինչպես է բարելավելու ուսուցչի առարկայական գիտելիքները:

Կարգի 77-րդ կետում նշվում է, որ 60-100 տոկոս ստացած ուսուցիչները կարող են երկրորդ անգամ դիմել իրենց արդյունքը բարձրացնելու համար: Այստեղ հասկանալի չէ, թե ինչու 90-100 միավոր ստացած և առավելագույն հավելավճար ստացող ուսուցիչը նորից պետք է ցանկանա մասնակցել կամավոր ատեստացիային: Երկրորդ անգամ ցածր արդյունք ստանալու դեպքում, ուսուցչին վճարվելու է նախորդ անգամ ստացած բարձր արդյունքի չափով: Սա կարևոր է, որպեսզի ուսուցիչները չվախենան երկրորդ անգամ մասնակցելուց:

---

[27] Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 2020: *Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչ և օրինակելի ծրագիր*, Երևան
https://escs.am/files/files/2021-03-17/bb274a81d92a24f1f2c544a4169c92f7.pdf

Կարգը չի հստակեցնում երրորդ անգամ դիմելու հնարավորությունը: Արդյոք ուսուցիչը կարո՞ղ է երրորդ կամ չորրորդ անգամ դիմել ատեստավորման: Եթե դա արգելված է, ապա անհրաժեշտ է կարգում գրել, որ 5-ամյա ժամկետում ուսուցիչը կարող է առավելագույնը երկու անգամ դիմել ատեստավորման:

Կարգում խնդիր կա 0-59 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների մասով: Կարգը երկրորդ անգամ դիմելու իրավունք է տալիս միայն 60-100 ստացած ուսուցիչներին: Սակայն ինչու օրինակ 59 միավոր ստացած ուսուցիչը չի կարող նորից մասնակցել կամավոր ատեստացիայի, եթե մեկ տարի անց հաջողությամբ հաղթահարում է հերթական ատեստացիան: Կարծում ենք, որ վերաատեստավորումը հաջողությամբ անցած ուսուցիչը նույնպես պետք է իրավունք ունենա մասնակցելու կամավոր ատեստացիային:

Կարևոր է, որ Կարգի 70-րդ կետը ապահովում է գաղտնիության սկզբունքը: Ըստ Կարգի՝ լիազոր մարմնին ներկայացվում են միայն ատեստավորումն անցած ուսուցիչների տվյալները: Մեր հարցումները ցույց տվեցին, որ շատ ուսուցիչներ չեն ցանկանում մասնակցել, քանի որ վախենում են, որ իրենց հեղինակությունը դպրոցում կարող է սասանվել: Հարցմանը մասնակցած ուսուցիչներից մեկը բերեց իր գործընկերոջ օրինակը, որ վերջինս չէր հաղթահարել անցողիկ շեմը և հոգեբանորեն ընկճվել էր գործընկերների, ծնողների հետ հարաբերություններում:

Կարգը հնարավորություն է տալիս ուսուցչին պահպանել հավելավճարը այլ դպրոց տեղափոխվելու դեպքում: Սակայն վիճելի է Կարգի 80-րդ կետը, որում նշվում է, որ «հանրակրթական ծրագիր իրականացնող այլ հաստատությունում համատեղությամբ աշխատող ուսուցիչն ատեստավորվում է հիմնական աշխատավայրում դասավանդող առարկայից: Հավելավճարը տրամադրվում է միայն հիմնական աշխատավայրում»[28]: Մենք ունենք ուսուցիչներ, որոնց դասավանդած առարկայի ժամերն այնքան քիչ են, որ նրանք դասավանդում են 2-3 դպրոցում: Եթե ուսուցիչը հաջողությամբ հանձնել է քննությունը, ապա ինչու՞ նա պետք է մեկ դպրոցից ստանա հավելավճարը:

Կարգում կան նաև անհամամասնություններ առարկաների միջև: Օրինակ՝ նշվում է, որ եթե ուսուցիչը դպրոցում դասավանդում է մեկից ավել առարկաներ և հաջողությամբ հաղթահարում է այդ առարկաներից որևէ մեկի կամավոր ատեստացիան, ապա նա հավելավճար է ստանում նաև մյուս առարկաների ժամաքանակների համար: Հայոց լեզվի ուսուցիչները քննություն չեն հանձնում «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաներից, իսկ Պատմության ուսուցիչները հանձնում են և՛ «Հայոց պատմություն», և՛ «Համաշխարհային պատմություն» առարկաներից: Ատեստացիայի այս համակարգը լուրջ անհամաչափություններ ունի տարբեր առարկաների պարագայում: Օրինակ՝ «Ֆիզկուլտուրա», «Տեխնոլոգիա», արվեստի ոլորտի առարկաներից հնարավոր չէ թեստերով ստուգում անցկացնել: Խնդիր կա նաև դասվարների մասով: Եթե դասվարներին հարցեր տրվեն 4-րդ դասարանից բարձր դասարանների թեմաներից, ապա դա արդար չի լինի: Բայց մինչև 4-րդ դասարանի թեմաներն էլ այնքան պարզ են, որ դրանք հաղթահարելը հեշտ կլինի: Այդ պատճառով Կարգում նշվում է, որ այս առարկաների ատեստացիայի ժամանակ կարող են օգտագործվել գործնական առաջադրանքներ: Ավելին, այս առարկաների ատեստացիան կարող են անցկացնել մասնագիտացված բուհերը: «Հայոց

---

[28] ՀՀ կառավարություն, 2022: *Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 596-Ն «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին»*, Երևան
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162427

պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» դասավանդող ուսուցիչները նույնպես կարող են ատեստացիան հանձնել մասնագիտացված բուհում՝ գործնական աշխատանքների միջոցով, որոնք կարող են պարունակել բաց և փակ հարցեր: Այսպիսով, հաշվի առնելով առարկաների յուրահատկությունները՝ նախարարությունն առաջարկում է տարբերակված մոտեցումներ: Այս դեպքում կարող են առաջանալ որոշակի կոռուպցիոն ռիսկեր, տարբեր բուհերում կարող են լինել տարբեր մոտեցումներ: Ի դեպ, Կարգի 57-րդ կետով սահմանված է նաև հանձնաժողովի ձևավորման սկզբունքը, որը նույնպես կոռուպցիոն ռիսկեր կարող է պարունակել: «Մասնագիտական հանձնաժողովում ներգրավվում են տվյալ որակավորմամբ մասնագիտական մանկավարժական կրթություն տրամադրող բարձրագույն ուսումնական հաստատության՝ գիտական աստիճան ունեցող և առնվազն 10 տարվա գիտամանկավարժական գործունեության փորձ ունեցող 4 ներկայացուցիչ և արհմիության կամ ուսուցչական միության 1 ներկայացուցիչ, որին կառաջադրի նախարարությունը»:[29] Ստացվում է, որ հանձնաժողովում կարող են լինելու մեկ բուհի ներկայացուցիչներ:

Կարգը կարող է խնդիրներ ստեղծել դպրոցների վարչական աշխատողների համար, որոնք նաև դասավանդում են: Դպրոցի վարչական աշխատողները նույնպես կարող են մասնակցել կամավոր ատեստացիային և արդեն կան մասնակցած ու հավելավճար ստացող դասավանդողներ: Բայց 2022 թ. փետրվարին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխությունների համաձայն, դպրոցի տնօրենները, վարչական մյուս աշխատողները բացառիկ դեպքերում են դասավանդելու հնարավորություն ունենալու: Մասնավորապես, օրենքում նշվում է, որ «վարչական աշխատողը կարող է դասավանդել միայն այն դեպքում, երբ համապատասխան առարկայի ուսուցչի թափուր տեղը չի համալրվում առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքով, կամ տվյալ առարկայի ուսուցիչները ապահովված են մեկ դրույք ծանրաբեռնվածությամբ»[30]:

Ի դեպ, Կարգում ներառված չէ «Շախմատ» առարկան, որը համարվում է պարտադիր առարկա դպրոցի 2-4-րդ դասարաններում:

Հետևաբար, որոշ դպրոցներում ունենալու ենք իրավիճակ, երբ վարչական աշխատող-դասավանդողը հավելավճար է ստանալու, սակայն չի դասավանդելու: Հասկանալի չէ, թե ինչպես է այս հարցը կարգավորվելու: Եթե վարչական աշխատողին արգելվելու է դասավանդել, ապա ինչի համար է նրան տրվելու հավելավճար: Մյուս կողմից, եթե դասավանդողն արդեն հաղթահարել է ատեստացիայի անցողիկ շեմը, ինչու պետք է նրան զրկենք հավելավճարից: Կարգը որևէ կերպ չի անդրադառնում այն հարցին, թե ինչ է լինում, եթե ատեստավորումն անցած ուսուցիչը դառնում է դպրոցի տնօրեն կամ փոխտնօրեն, արդյո՞ք պահպանվում է նրա հավելավճարը: Եթե չպահպանվի, ապա ատեստավորված ուսուցիչները չեն ցանկանա դառնալ դպրոցի տնօրեն կամ փոխտնօրեն:

Կարգի խնդիրներից մեկն այն է, որ ատեստավորումը հաղթահարած ուսուցիչներից չի պահանջվում որևէ լրացուցիչ աշխատանք, արդյունք, հաշվետվողականություն: Օրինակ՝ Արարատյան բակալավրիատի ծրագրում նախատեսված էր, որ հավելավճար ստացող շուրջ 2000 ուսուցիչները պետք է լինեն մենթորներ՝ յուրաքանչյուրը 10 ուսուցչի համար: Այս դեպքում ուսուցիչը պարզապես ստանում է հավելավճար՝ առանց որևէ լրացուցիչ աշխատանքի:

---

[29] Նույն տեղում:

[30] ՀՀ Ազգային ժողով, 2022: *Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»*, Երևան https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=160449

Կարգը հնարավորություն է տալիս ոչ պետական ուսուցիչներին նույնպես մասնակցել կամավոր ատեստավորմանը։ Պարզապես անցողիկ շեմը հաղթահարելու դեպքում, ոչ պետական դպրոցի ուսուցչի հավելավճարը վճարում է դպրոցի հիմնադիրը։

Եզրակացություններ

Կամավոր ատեստացիայի փորձնական փուլի արդյունքների, օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ այս գործընթացը չափազանց կարևոր դեր կարող է ունենալ Հայաստանի ուսուցիչների աշխատանքի, մասնագիտական զարգացման գործընթացում: Կամավոր ատեստացիայի խելամիտ կազմակերպումը կարող է շատ դրական դեր խաղալ համակարգում: Անցկացված հետազոտության հիման վրա կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

1) Փորձնական ատեստացիայի թեստերի որակն անկատար է եղել: Առաջադրանքների ծավալը և հատկացված ժամանակը եղել են անհամապատասխան: Թեստերի որակից էական դժգոհություններ չեն արձանագրվել միայն «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաներից: «Քիմիա» առարկայի պարագայում արձանագրվել են բազմաթիվ վիճելի առաջադրանքներ:

2) Չկա հստակ պետական պատվեր, թե ինչ է նշանակում ուսուցիչների առարկայական գիտելիքների ստուգում: Դա նշանակում է դասագրքերի՞ց առաջադրանքներ տալ, թե՞՝ շտեմարաններից: Որոշ առարկաների դեպքում կարող են առաջանալ խնդիրներ, հատկապես, որ դպրոցներում օգտագործվում են նույն առարկայի՝ մեկից ավելի դասագրքեր:

3) ԿԳՄՍ նախարարությունը բավականին մեծ կշիռ է տալիս առարկայական գիտելիքի ստուգմանը՝ ավելի քիչ կշիռ տալով մեթոդամանկավարժական աշխատանքներին: Միայն կամավոր ատեստացիան հաղթահարած ուսուցչի բազային աշխատավարձը կարող է դառնալ 200 հազար դրամ: Մինչդեռ միայն տարակարգ ունեցող ուսուցչի բազային աշխատավարձը մնում է անփոփոխ: Չեն գնահատվում ուսուցչի աշխատանքի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են դասեր վարելը, «փափուկ» հմտությունները, աշակերտների ընդհանուր առաջադիմությունը (հաղորդակցություն, համագործակցություն, կոնֆլիկտների լուծում): Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուսուցիչները կարևորում են այն պահանջները, որոնց համար հավելավճար կարող են ստանալ, և անտեսում են այն գործոնները, որոնց համար հավելավճար չի տրվում (OECD, 2019, p. 144) : Կարող ենք կանխատեսել, որ առաջիկայում մեծ թվով ուսուցիչներ զգալի ժամանակ են ներդնելու դասագրքերը, շտեմարանները սերտելու վրա՝ հետին պլան մղելով դասերին նախապատրաստվելը, մեթոդական հնարները:

4) Փորձնական կամավոր ատեստացիայի արդունքում արձանագրվել են անհամաչափ արդյունքներ տարբեր առարկաներից: «Մաթեմատիկա» առարկայից արձանագրվել են շատ բարձր արդյունքներ, փոխարենը «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն» առարկաներից՝ շատ ցածր արդյունքներ: «Ֆիզիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն» առարկաներից արձանագրվել են միջին արդյունքներ: Խնդիր կա հասկանալու նման անհամաչափությունների պատճառները:

5) Կամավոր ատեստացիան կարգավորող փաստաթղթերում կան կետեր, որոնք հօգուտ ուսուցչի են: Մասնավորապես, Կարգը հնարավորություն է տալիս ուսուցիչներին պահպանել հավելավճարը դպրոցից դպրոց տեղափոխվելու դեպքում: Եթե ուսուցիչը երկրորդ անգամ է մասնակցում կամավոր ատեստացիային և ստանում է ավելի ցածր միավոր, քան առաջին մասնակցության ժամանակ, ապա պահպանվում է նախորդ ավելի բարձր միավորը: Ապահովվում է նաև մասնակցության գաղտնիությունը, քանի որ հրապարակվելու են միայն դրական շեմը հաղթահարած ուսուցիչների անունները:

6) Մի շարք առարկաների կամավոր ատեստացիայի իրականացումը թեստային ձևով

(Արվեստի բնագավառի առարկաներ, «Ֆիզկուլտուրա», «Ռազմագիտություն» և այլն) դժվար է իրականացնել: Հետևաբար, նախարարությունը հնարավորություն է տալիս այս առարկաների ատեստացիան անցկացնել մասնագիտացված բուհերում՝ գործնական աշխատանքների, բաց և փակ հարցերի միջոցով: Ստեղծվելու է մասնագիտական հանձնաժողով, որում ընդգրկվելու են բուհի մասնագետներ, արհմիության կամ ուսուցչական միության 1 ներկայացուցիչ, որին կառաջադրի նախարարությունը:

7) Կամավոր ատեստացիայի անցողիկ շեմը հաղթահարած հիմնական և միջնակարգ դպրոցների ուսուցիչների թիվը հարաբերական առումով բավականին ցածր է ավագ դպրոցների և վարժարանների ուսուցիչների թվից: Հիմնական դպրոցի ուսուցիչների շրջանում առկա է դժգոհություն, որ իրենք երկար ժամանակ կամ ընդհանրապես չեն դասավանդել ավագ դասարաններում, և արդար չէ իրենց կրթության այդ աստիճանից առաջադրանքներ տալը: Նախարարության դիրքորոշումն այն է, որ բուհերն ավարտող շրջանավարտները պետք է յուրացրած լինեն տվյալ առարկայի միջնակարգ կրթության ամբողջ ծրագիրը: Այդուհանդերձ, եթե գործող մեխանիզմը չվերանայվի, ապա 2-3 տարի հետո Հայաստանի ավագ դպրոցների, և, հատկապես, վարժարանների ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կստանա բարձր աշխատավարձ, իսկ որոշ հիմնական դպրոցներում ընդհանրապես չեն լինի հավելավճար ստացողներ:

8) Թեև կամավոր ատեստացիան հաղթահարած ուսուցիչների համար սահմանված է համեմատաբար բարձր աշխատավարձ, նրանցից որևէ արդյունք, ներդրում չի պահանջվում: Նախարարությունը նրանց գիտելիքները որևէ ձևով կրթության զարգացման նպատակով օգտագործելու պահանջ չի սահմանում:

Առաջարկություններ

ԿԳՄՍ նախարարությանը, Կրթության զարգացման և նորարարությունների կենտրոնին՝ ուսուցիչների աշխատանքի խրախուսման վերաբերյալ

1) Բարձրացնել բոլոր ուսուցիչների բազային աշխատավարձը, որպեսզի ատեստավորված և չատեստավորված ուսուցիչների աշխատավարձի տարբերությունը մեծ չլինի։
2) Ուսուցիչների աշխատանքի խրախուսման մեխանիզմները դարձնել ավելի բազմաչափ՝ նվազեցնելով կամավոր ատեստացիային տրված մեծ կշիռը։ Ուսուցիչների աշխատանքի խրախուսման գործոնների թվում ներառել դասալսումների արդյունքները, որոնք հնարավորություն կտան գնահատել ուսուցչի ուղղակի աշխատանքն աշակերտների հետ։ Մշակել դասալսման արդյունավետ չափանիշներ։
3) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով կտրուկ մեծանում է տնօրենների հաշվետվողականությունը՝ տնօրեններին հնարավորության տալ նախարարության կողմից սահմանված ցուցիչներով խրախուսել լավագույն ուսուցիչներին։
4) Յուրաքանչյուր կիսամյակում կազմակերպել ուսուցիչների 30 և 60 ժամանոց առարկայական վերապատրաստումներ՝ ըստ ուսուցչի ընտրության։ Որպես վերապատրաստողներ ներգրավել ատեստացիայի ժամանակ 80-100 տոկոս ստացած ուսուցիչներին։

ԿԳՄՍ նախարարությանը, ԳԹԿ-ին՝ գիտելիքների ստուգման պահանջների, ձևերի վերաբերյալ

1) Բոլոր առարկաների համար ապահովել առաջադրանքների բարդության համարժեք աստիճան՝ արդյունքների բևեռացումից խուսափելու համար։
2) Հաշվի առնել առաջադրանքների ծավալի և հատկացված ժամանակի հարաբերակցությունը։
3) Բարելավել առաջադրանքների որակը՝ ներառելով մտածողության հետ կապված, ստեղծագործական բնույթի, ռեալ դասարանային իրավիճակների հետ կապված խնդիրներ։
4) Վերապատրաստել թեստերի հեղինակներին՝ նրանց թեստաբանական կարողությունները զարգացնելու նպատակով։
5) Բուհերում անցկացվող գիտելիքների ստուգման գործընթացի մասնագիտական հանձնաժողովում ընդգրկել տարբեր բուհերի ներկայացուցիչների։

ԿԳՄՍ նախարարությանը՝ կարգի վերանայման վերաբերյալ

1) Հիմնական դպրոցում դասավանդող ուսուցիչների համար հավելավճարի անցողիկ շեմ դիտարկել 60-69 միավորը՝ սահմանելով 20 տոկոս հավելավճար։
2) 0-59 տոկոս հավաքած ուսուցիչներին վերաատեստավորում անցնելուց հետո հնարավորություն տալ նորից մասնակցելու կամավոր ատեստավորման։
3) 60-89 տոկոս ստացած ուսուցիչների մասնակցության մասին կարգում նշել, որ նրանք կարող են առանց սահմանափակման մասնակցել կամավոր ատեստավորման։
4) 90-100 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչներին մասնակցության հնարավորություն տալ միայն 5 տարի անց։
5) Կարգում հստակեցնել տնօրենների և այլ վարչական աշխատողների վճարման մեխանիզմը։ Ատեստավորման դրական շեմը հաղթահարած ուսուցչի՝ տնօրեն կամ փոխտնօրեն

դառնալու դեպքում պահպանել հավելավճարը մինչև 5 տարին լրանալը։

6) Կարգում ներառել «Շախմատ» առարկան։

Հավելված 1. Խորին հարցազրույցի հարցաշարեր

Հարցեր կամավոր ատեստացիան հաղթահարած ուսուցիչների համար

1. Ինչպե՞ս կգնահատեք կամավոր ատեստացիայի գործընթացը։
2. Ինչպե՞ս էր կազմակերպված կամավոր ատեստացիայի գործընթացը։ Ի՞նչ դրական և բացասական կողմեր նկատեցիք։
3. Հատկացված ժամանակը բավարա՞ր էր։
4. Կայի՞ն դժվար կամ ոչ ծրագրային հարցեր՝ մանրամասնեք
5. Արդյո՞ք ճիշտ եք համարում թեստի միջոցով գիտելիքների ստուգումը։
6. Ի՞նչ այլընտրանքներ կառաջարկեք։
7. Ինչու՞ ձեր գործընկերների մեծ մասը չդիմեց ատեստացիայի գործընթացին։
8. Ի՞նչ առաջարկություններ ունեք։

Հարցեր կամավոր ատեստացիային չմասնակցած ուսուցիչների համար

1. Ինչպե՞ս կգնահատեք կամավոր ատեստացիայի գործընթացը։
2. Ինչու՞ չմասնակցեցիք կամավոր ատեստացիային։
3. Արդյո՞ք ճիշտ եք համարում թեստի միջոցով գիտելիքների ստուգումը։
4. Ի՞նչ այլընտրանքներ կառաջարկեք։
5. Ինչու՞ Ձեր գործընկերների մեծ մասը չդիմեց ատեստացիայի գործընթացին։
6. Այս տարի կդիմե՞ք ատեստացիայի։
7. Ի՞նչ առաջարկություններ ունեք։

Հավելված 2. Հետազոտության շրջանակում ուսուցիչների հետ իրականացված խորին հարցազրույցի արդյունքները

Կամավոր ատեստացիայի հետազոտության առցանց խորին հարցազրույցին մասնակցել է **28 ուսուցիչ**: Հարցազրույցներն իրականացվել են՝ ըստ նախօրոք մշակված հարցաշարի (տե՛ս Հավելված 2):

1. Հարցազրույցում ընդգրկված ուսուցիչները ներգրավված են եղել **ՀՀ 10 մարզերից և Երևան քաղաքից**.

Քաղաք	Գյուղ	Ընդամենը
22	6	28

2. Հարցազրույցին մասնակցած 28 ուսուցիչներից 24-ը մասնակցել են կամավոր ատեստացիային, որոնցից անցողիկ շեմը հաղթահարել են 17 ուսուցիչ, չեն հաղթահաչել՝ 7-ը.

Հաղթահարել են	Չեն հաղթահարել	Չեն մասնակցել	Ընդամենը
15	9	4	28

2ա. Հաղթահարածների թիվը՝ ըստ դպրոցի տեսակի.

Հիմնական	Միջնակարգ	Ավագ	Վարժարան	Ընդամենը
6	3	4	2	15

3. Հարցազրույցին մասնակցած ուսուցիչների շարքում ընդգրկված են 7 առարկաներից դասավանդող ուսուցիչներ.

Հ.լեզու և գրականություն	Հայոց պատմություն	Մաթեմատիկա	Աշխարհագրություն	Կենսաբանություն	Քիմիա	Ֆիզիկա	Ընդամենը
4	6	4	3	2	4	5	28

4. Հարցազրույցին մասնակցած ուսուցիչները դասավանդումը՝ ըստ դպրոցների տեսակների

Հիմնական	Միջնակարգ	Ավագ	Քոլեջ կամ վարժարան	Ընդամենը
15	6	5	2	28

5.Հարցազրոյցի մասնակիցները՝ ըստ սեռի.

Իգական	Արական	Ընդամենը
25	3	28

6. Հարցազրոյցի մասնակիցները՝ ըստ մանկավարժական ստաժի

1-6	7-15	16-25	26-35	35 և ավելի	Ընդամենը
3	4	6	11	4	28

Կամավոր ատեստացիային մասնակցած ուսուցիչների հետ իրականացված խորին հարցազրույցների արդյունքները (14 ուսուցիչ)

1) Ինչպե՞ս կգնահատեք կամավոր ատեստացիայի գործընթացը: Ի՞նչ դրական և բացասական կողմեր նկատեցիք:

Ուսուցիչների մեծ մասը նշել էր, որ բովանդակային տեսանկյունից կար անորոշություն: Ուղեցույցում մատչելի ներկայացված էր, թե ինչպես պետք է լրացվեն թեստերի պատասխանները: Իսկ որոշ առարկաների դեպքում ներկայացված չէր թեստի նմուշ-օրինակ, նույնիսկ նշված չէին կոնկրետ թեմաներ:

Թերություններ են եղել և՛ բովանդակային, և՛ տեխնիկական առումներով: Բազմաթիվ տեխնիկական վրիպակներ, բացթողումներ, անորոշ և վիճելի հարցեր են եղել:

Մասնակից ուսուցիչների մեծամասնությունը նշել է, որ հենց քննության ժամանակ են բացահայտել, որ տարբեր առարկաների թեստերում տարանջատված չեն եղել հիմնական և ավագ դպրոցների համար նախատեսված թեստերը: Հիմնականում տարեց ուսուցիշների մոտ եղել է անհանգիստ, խուճապային վիճակ՝ ճնշումի բարձրացում, սթրեսային լարվածություն: Մի քանի ուսուցիչներ դժվարացել են պատասխանները տեղադրել ձևաթղթի համապատասխան մասերում:

2) Հատկացված ժամանակը բավարա՞ր էր:

Գրեթե բոլոր ուսուցիչները նշել են, որ հատկացված ժամանակը բավարար չի եղել, թեստերի հարցերի ծավալուն լինելը և հատկացված ժամանակը եղել են անհամատեղելի: Շատերի համար ժամանակը չի բավարարել անդրադառնալ բոլոր հարցերին, կամ էլ գոնե մեկ անգամ վերանայել իրենց պատասխանները: Հատկացված է եղել 3 ժամ, որոշ առարկաների համար ժամանակը երկարացվել է 30 րոպեից մինչև 1 ժամ 30 րոպե: Սակայն դա էլ որոշ առարկաների համար բավարար չի եղել: «**Մաթեմատիկա» և «Ֆիզիկա»** առարկաների ուսուցիչների համար ժամանակը հիմնականում եղել է բավարար:

3) Կայի՞ն դժվար կամ ոչ ծրագրային հարցեր՝ մանրամասնեք:

Որոշ առարկաների թեստերում եղել են **դժվար** հարցեր, բայց հիմնականում դժվարացել են այն ուսուցիչները, որոնք աշխատել են հիմնական դպրոցում: Բարդ հարցերի դեպքում դժվարացել են նաև այն ուսուցիչները, որոնք կրկնուսույց չեն, ծանոթ չեն շտեմարաններին: Ուսուցիչների մեծամասնությունը նշել է, որ հարցերը եղել են ծրագրային:

«Քիմիա» առարկայի վերաբերյալ ուսուցիչները նշել են, որ թեստերի հարցերում կային նաև ավագ դպրոցի ծրագրից դուրս հարցեր: Այս մասին մի ուսուցչուհի նշել է, որ՝ «*Հարցերի կեսից ավելին ոչ ծրագրային էին: Շեշտը դրված էր թերմոդինամիկայի վրա, որը դպրոցում մենք ընդամենը 1 դաս ենք անցնում, այն էլ թռուցիկ»:* Բացի այդ, նրանք նշել են, որ՝ «*շատ խրթին էին ձևակերպումները, պետք է մի 3-4 անգամ կարդայինք, որ պատկերացնեինք պահանջը և թե ինչ պատասխան դուրս բերեինք*»: «*…Ասես գրողը հայ չլիներ: Ժամանակի մեծ մասը գնում էր* վերծանելու համար», -ասել է մի Քիմիայի ուսուցչուհի:

Կային հաշվարկային սխալներ, կար հարց, որ ճիշտ պատասխան չուներ: Մի ուսուցիչ նշել էր, որ՝ «…շատ անփույթ թեստ էր, բազմապատկումն ու հանածն այնպես էին գրված, որ բոլորը հանած էր երևում: Բացի այդ, եթե ես խնդրի քիմիական մասը ճիշտ եմ լուծել, ի՞նչ իմաստ ունի այն ծանրացնել թվաբանական հաշվարկներով»:

«Մենք բարձրաձայնելու իրավունք չունեինք, ուղղակի երբ տեսանք, որ նախ ժամանակը չի հերիքում, հետո աշխատանքի կեսը սխալ էր ստացվում, մենք չէինք կարողանում ճիշտ

պատասխան գտնել, այդ ժամանակ բարձրաձայնեցինք, որ այդպես չի լինի, և մենք չենք շարունակի աշխատանքը: Պահանջեցինք, որ կանչեն պատասխանատու մարդ, որը բացատրի, թե ինչու է մեր նկատմամբ նման վերաբերմունք ցուցաբերվում, հո մենք առաջին դասարանի երեխաներ չենք, բոլորս էլ մասնագետներ ենք ու հասկանում ենք՝ ինչ ենք գրում: Ո՞նց կարելի է մասնագետին այդքան ճնշել ու տեռորի ենթարկել: Եկավ տիկին Ժաննա Անդրեասյանը և ասաց, որ հարցին լուծում կտան, կկազմակերպեն հանդիպում ուսուցիչների հետ, և մենք մեր բոլոր հարցերի պատասխանները կստանանք: Դեռևս սպասում ենք այդ հանդիպմանը: Հետո նամակ գրեցինք ԿԳՄՍ նախարարությանը, և պատասխանում ասված էր, որ դուք ճիշտ չեք ընկալել, հարցերը ճիշտ էին կազմված, ձեր լուծումները չէին համապատասխանում իրականությանը»:

«Կենսաբանություն» առարկայի թեստերի վերաբերյալ ուսուցիչներից մեկը նշել է, որ թեստերում ընդգրկված էին 7-8 տարվա գրքերից հարցեր, որոնք ընդամենը 1-2 տարի են օգտագործվել դպրոցներում: Իսկ մի ուսուցչուհի էլ նշել էր, որ *«…թեստերում ներառված էին մեխանիկական, անգիր պահանջող հարցեր իսկ մենք մեր աշակերտներից պահանջում ենք քննադատական միտք, մտածողություն»*: Բացի այդ, հաշվարկների մասն էր շատ: ԲՈՒՀ ընդունվողներին բնորոշ թեստեր էին:

«Աշխարհագրություն» առարկայի վերաբերյալ ուսուցիչները նշել են, որ կային վիճելի, ոչ հստակ ձևակերպված հարցեր, կային դժվար հարցեր, որոնց ուսուցման ընթացքում չեն առնչվել: Չկային տրամաբանական, քարտեզագրական, վերլուծողական հարցեր: Կային զգալի հարցեր, որոնք ավելի շատ վերաբերում էին ֆիզիկա և կենսաբանության առարկաներին: «*…Հարցեր կազմողները կարծես դիտմամբ բարդացրել էին, օրինակ՝ հարցը կարող էր վերաբերել դասագրքում առկա մի նկարի տակ աստղանիշով գրված տեքստի, կամ՝ կար հարց, թե քանի տեսակի սունկ է հանդիպում: Այսպիսի հարցերին չպատասխանելը իջեցնում է գնահատականը: Իմ աշխատանքը կազմել էր 60 տոկոս, բողոքարկումից հետո դարձավ 77,8 տոկոս: Այդքան սխալ և անճշտություն կար թեստերում: Կարող էին ավելի լավ թեստ կազմել»*, - ասել է Կենսաբանության մի ուսուցչուհի:

«Ֆիզիկա» առարկայի վերաբերյալ ուսուցիչները նշել են, որ կային քիչ դժվար հարցեր, որոնք հաղթահարելի էին: Շատ էին թվաբանական հաշվարկները: Հիմնական դպրոցում աշխատող ուսուցիչները չէին կարող ամբողջությամբ հաղթահարել, եթե ԲՈՒՀ-երի ընդունելության ծրագրին ծանոթ չէին, բացի այդ միջնակարգ կամ հիմնական դպրոցում դասաժամերի քանակը քիչ է, և չեն հասցնում ծրագիրն ուսումնասիրել համապատասխան խորությամբ:

«Մաթեմատիկա» առարկայի վերաբերյալ ուսուցիչները նշել են, որ կային և՛ դժվար խնդիրներ, և՛ ծրագրից դուրս հարցեր: Հարցաշարում օրինակ կային Կոմբինատորիկայի տարրերից: Սակայն եթե ուսուցիչները վերանայած լինեին իրենց գիտելիքները կամ ծանոթ լինեին ԲՈՒՀ-երի ընդունելության ծրագրին, կարող էին հաղթահարել:

«Հայոց լեզու» առարկայի վերաբերյալ ուսուցիչները նշել են, որ հարցերը ծրագրային էին, օրինակներն էին քիչ բարդ: Չնայած հարցերը շտեմարանից չէին, բայց եթե ուսուցիչները ծանոթ լինեին շտեմարանի հարցերին, դժվար հարցերը մատչելի կլինեին:

«Պատմություն» առարկայի վերաբերյալ ուսուցիչները նշել են, որ հարցերի հիմնական մասը միասնական քննությունների շտեմարանից էր, կամ վերցրել էին ավագ դպրոցի դասագրքերի լրացուցիչ նյութերից: Թեստերը դժվարությամբ կհաղթահարեին հիմնական դպրոցի ուսուցիչները: Կային անկարևոր հարցեր, ենթահարցերից 1-ին չպատասխանելու դեպքում արդյունքում կորցնում ես ամբողջական 1 միավոր: Ուսուցիչներից մեկը նշել է, որ, օրինակ, աստղանիշով նշված ինչ որ փոքրիկ հատված վերցված և դրված է քննական հարցերում: Այնպիսի հարցեր կան, որ պարտադիր չէ իմանալ, *«…օրինակ ես չեմ էլ պատրաստվում սովորել, թե՝ ում ելույթը որ թերթում կամ ինչի*

համար է տպագրվել: Օրինակ՝ «Զորի Բալայանի ելույթը ԽՄԿԿ նիստում և որ թերթում է տպագրվել, որ իրադարձությունից հետո...»:

Ուսուցիչներից մեկը նշել էր, որ թեստերում նշված էին այնպիսի հարցեր, որոնք կարծես նախատեսված էին կրկնուսույցների կամ լավ անգիր տիրապետողների համար: «*Մեջբերում է կատարված ինչ-որ զորավարի խոսք, ու գրված է՝ «Նշեք, թե այս խոսքը ո՞ր բերդի գրավման ժամանակ և ո՞վ է արտաբերել»: Եվ եթե ուսուցիչը չհիշեց, որ այդ զորավարը այդ բերդի գրավման ժամանակ այսպիսի ճառով հանդես է եկել, ուրեմն նա այդ ժամանակաշրջանի պատմությանը լրիվ անտեղյակ է: Հիմա մեզ պետք է տվյալ զորավարի խոսքե՞րն անգիր հիշել, թե՞ տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններն ու դեպքերը: Կամ՝ մեջբերում է կատարած և հանձնարարված է ասել, թե որ պատմիչի աշխատության միջից է տվյալ հատվածը*»:

Եվս մեկ օրինակ. «Քաղաքի պաշտպանության մասին մեջբերում է, վերջում գրված է՝ ո՞ր քաղաքի պաշտպանության մասին է խոսքը: Տարբերակներից մեկը նշված է՝ Արատտա: Ես հենց սկզբից բացառեցի այդ տարբերակը, բայց վերջում պարզվեց, որ Արատտան է: Բայց այսքան ժամանակ մենք գիտենք, որ Արատտան պետություն է՝ վաղ պետական կազմավորում ՔԱ 28-27-րդ դարեր, այլ ոչ թե քաղաք: Նման զարմանալի հացեր շատ կային»:

4) Արդյո՞ք ճիշտ եք համարում թեստի միջոցով գիտելիքների ստուգումը:

Մասնակիցների մոտ մեկ երրորդը նշել է, որ ճիշտ են համարում թեստի միջոցով ուսուցչի գիտելիքի ստուգումը, քանի որ այն չափելի է, և արդյունքները՝ նույնպես, իսկ բանավորի դեպքում գործելու է սուբյեկտիվ գործոնը:

Ուսուցիչների գերակշռող մասը նշել է, որ թեստի միջոցով գիտելիքի ստուգումը սխալ է: Մի մասն էլ նշել է, որ թեստով հնարավոր է ստուգել միայն ուսուցչի մասնագիտական գիտելիքները, այլ ոչ՝ մանկավարժական: Առարկային տիրապետող ուսուցիչ դեռ չի նշանակում լավ ուսուցիչ լինելը: *«Մենք շատ լավ ֆիզիկոսներ ունենք, բայց աշակերտներին մատչելի չեն կարողանում բացատրել»:* Եվս մեկ ուսուցիչ նշել է, որ դիմորդների ընդունելության քննության թեստերը հանելու փոխարեն, ուսուցիչներին էլ են նույն խնդրի առաջ կանգնեցրել: Հիմա ուսուցիչները պետք է նստեն հարցաշարերը սովորեն, որ անգիր անեն և կամավոր ատեստավորման մասնակցեն:

5) Ի՞նչ այլընտրանքներ կառաջարկեք:

- Բազմակողմանի ստուգում է պետք և՛ գիտելիքի, և՛ վարած դասերի, և՛ ակտիվությունը մրցույթներին, դասալսումների, աշակերտների գիտելիքների ստուգման, մեթոդների օգտագործման արդյունավետության գնահատման միջոցով, ինչպես նաև օլիմպիադաներին աշակերտների մասնակցության քանակի:
- Անհրաժեշտ է նաև բանավոր ստուգում, վերլուծական մտքի ստուգում: Թեստերի որոշ մասը պետք է լինի բանավոր, քանի որ պատմություն առարկայում վերլուծություն, համեմատություն, պատճառահետևանքային կապ պետք է ներկայացնել:

6) Ինչո՞ւ Ձեր գործընկերների մեծ մասը չդիմեց ատեստացիայի գործընթացին:

- Ձայրացել են, որ աշխատավարձի բարձրացումը կատարվում է ատեստացիայի միջոցով, և գտնում են, որ ուսուցչին ստորացնում են, համարում էին ծաղրանք ուսուցչի նկատմամբ, ինքնասիրությունը վիրավորող:
- Երիտասարդ ուսուցիչները հիմնականում չհամարձակվեցին՝ վախից: Շատ լավ ուսուցիչներ էլ, ովքեր տարիքով էին, սթրեսային վիճակից խուսափելու համար չմասնակցեցին:

- Անորոշության պատճառով։
- Վստահություն չկար։
- Հեղինակության հարցը ստիպեց, որ չմասնակցեն՝ մտածելով, որ ունեն լավ անուն, քիչ թե շատ հարգված են, և իրենց տարիների վաստակը կարող է քննության արդյունքները զրոյացնեն։

7) Այս տարի նորից կդիմե՞ք։

- Կմասնակցեմ, եթե ավելի որոշակի լինի, եթե բարեփոխումներ լինեն։
- Եթե պարտադիր լինի։

8) Ի՞նչ առաջարկություններ ունեք։

- Ուսուցչի արժանապատվությունը բարձրացնելու համար առաջարկում եմ նախ բոլոր ուսուցիչների աշխատավարձը բարձրացնել, հետո կամավոր ատեստացիայով հավելավճար առաջարկել։
- Ֆինանսապես խրախուսել ու աջակցել նվազագույն շեմը հաղթահարած, բայց 70 տոկոսը չհաղթահարած ուսուցիչներին։
- Նվազեցնել տեքստերի ծավալը, ավելացնել ատեստացիային հատկացված ժամանակը։
- Թեստեր կազմող հանձնաժողովում ընդգրկել գիտակ մասնագետներ և անցկացնել թեստերի փորձաքննություն։
- Թեստերում ներառել ուսուցչի վերլուծական աշխատանքը, մտածողությունը, տրամաբանությունը ստուգող վարժություններ կամ առաջադրանքներ։
- Թեստերը լինեն հստակ, զերծ լինեն սխալներից, վրիպակներից, չպարունակեն երկակի պատասխաններ։
- Բոլոր առարկաների թեստերի համար մշակել ընդհանուր չափանիշներ։
- Ուղեցույցում ավելի հստակեցնել առարկաների բաժինները, բոլոր առարկաների համար տեղադրել թեստի նմուշներ։
- Բարձրացնել ատեստավորումը հաղթահարած ուսուցիչների հավելավճարները։
- Տարանջատել հիմնական ու ավագ դպրոցի ուսուցիչների քննական թեստերը, որպեսզի հիմնական դպրոցում դասավանդող ուսուցիչն իրեն չզգա երկրորդական կարգավիճակում։
- Ուսուցիչների նկատմամբ ցուցաբերել հարգալից վերաբերմունք։
- Համագործակցել Արարատյան Բակալավրիատի հետ։
- Կամավոր ատեստավորումը կազմակերպել նաև մարզերում։

Չհրապարակել չհաղթահարած ուսուցիչների վերաբերյալ տեղեկությունները. « …Գիտեմ ուսուցչի, ով ավելի երկար տարիների փորձ ունի: Նա նույնպես մասնակցել է կամավոր ատեստավորման և չի հաղթահարել, պետք էր տեսնել, թե ինչ սթրես էր տանում, ասում էր, որ ամբողջ գյուղում խայտառակ է եղել, ուսուցիչների դեմքին չի կարողանում նայել»։

- Պետք է յուրաքանչյուր ուսուցչի անհատական էջին ուղարկել և երաշխավորել գաղտնիությունը, իսկ այդ ինդեքսացիան փոխանցել ուսուցչի անձնական բանկային հաշվին, ոչ թե դպրոցի միջոցով՝ մանակավարժին կախման մեջ դնելով տնօրենից։

- Կամավոր ատեստացիան կազմակերպել 2 կամ 3 փուլով։

Կամավոր ատեստացիային չմասնակցած ուսուցիչների հետ իրականացված խորին հարցազրույցի արդյունքները (4 ուսուցիչ)

Խորին հարցազրույցին մասնակցած այն ուսուցիչները, որոնք չեն մասնակցել կամավոր ատեստացիային, հիմնականում կամավոր ատեստացիայի գաղափարը գնահատել են բավարար։ **Ինչու՞ չեն մասնակցել կամավոր ատեստացիային** հարցին, հիմնականում նշել են, որ գաղափարը նոր էր, կար անորոշություն և իրազեկվածության պակաս բովանդակության հետ կապված, չկային նմուշներ, բացի այդ, հիմնական դպրոցում աշխատելու ու երկար տարիներ 10-12-րդ դասարանների ծրագրի հետ շփում չունենալու և ժամանակի սղության հետ կապված վախի զգացումը։ Ուսուցիչներից մեկը նշել է, որ ներառական դպրոցում սահմանափակվում է ուսուցիչների հնարավորությունը, քանի որ չեն կարողանում լրացուցիչ մասնագիտական խնդիրներ կամ վարժություններ առաջարկել աշակերտներին։ Նշել են նաև, որ թեստի միջոցով ստուգումը համարում են սխալ, առաջարկում են թեստի միջոցով գիտելիքի ստուգմանը զուգահեռ նաև բանավոր ստուգումը, դպրոցներում դասալսումների իրականացումը, աշակերտների ցուցաբերած արդյունքների գբահատումը, օլեմպիադաներին նրանց մասնակցությունը և այլ ցուցանիշներ։

Ինչու՞ Ձեր գործընկերների մեծ մասը չդիմեց ատեստացիայի գործընթացին հարցին, նշել են այն նույն մտահոգությունները, ինչ ատեստացիային մասնակցած ուսուցիչները։ Այս տարի նրանք կմտածեն՝ դիմել, թե ոչ։ **Ի՞նչ առաջարկություններ ունեք** հարցին ի պատասխան՝ ուսուցիչներն առաջարկում են.

- Բարձրացնել ուսուցիչների մոտիվացիան, տալ ստիմուլ՝ իր վրա աշխատելու, բարձրացնել նրանց դերն ու հեղինակությունը։
- Իրականացնել պարտադիր ատեստացիա որոշակի ժամկետով, կազմակերպել դասալսումներ բոլոր ուսուցիների դասերին։
- Հիմնական և ավագ դպրոցների թեստերի տարանջատում։
- Բացի գիտելիքներից, ստուգել նաև մանկավարժի հմտությունները։
- Այս ծախսերն ուղղել նրան, որ մանկավարժական ինստիտուտն ավարտած ուսանողը պատրաստված լինի լավ ուսուցիչ լինելու։

Գրականություն

OECD, 2019. *Working and Learning Together: Rethinking Human Resource Policies for Schools* https://doi.org/10.1787/b7aaf050-en

Sahlberg, P., 2015. *Finnish Lessons 2.0: What Can the World Learn from Educational Change in Finland?* 2nd edition; Teachers College Press https://www.academia.edu/34598324/Finnish_Lessons_2_0_What_Can_t_Pasi_Sahlberg

Աբստրակտ

Հետազոտության մեջ քննարկվում են 2021 թվականի Հայաստանում փորձարկված ուսուցիչների կամավոր ատեստացիայի գործընթացը, դրա արդյունքները, ինչպես նաև հաջորդած փոփոխություններն իրավական փաստաթղթերում: Կամավոր ատեստացիայի միջոցով ստուգվում են ուսուցիչների առարկայական գիտելիքները: 70-100 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների համար սահմանվում է աշխատավարձի բարձրացված սանդղակ:

7 առարկաներից անցկացված փորձարկման մասնակցության ցուցանիշները, արդյունքները վերլուծվել են ըստ առարկաների, դպրոցների, տեսակների, գտնվելու վայրերի, սեռի: Ուսուցիչների, փորձագետների հետ անցկացված հարցազրույցների հիման վրա բացահայտվել են կամավոր ատեստացիայի ընթացքում արձանագրված խնդիրները:

Հետազոտվել են կամավոր ատեստացիայի փորձարկմանը հաջորդած օրենսդրական փոփոխությունները: Վերլուծության մեջ նշված են ինչպես փաստաթղթերում արձանագրված դրական փոփոխությունները, այնպես էլ առկա բացերը, անորոշությունները:

Ներկայացվել են առաջարկություններ կամավոր ատեստացիայի գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Բանալի բառեր. ուսուցիչների կամավոր ատեստացիա, ուսուցիչների աշխատանքի խրախուսում, փորձնական ատեստացիայի թեստեր, ուսուցիչների առարկայական գիտելիքների ստուգում

Abstract

The study discusses the process of voluntary attestation of teachers piloted in Armenia in 2021, its results, as well as the subsequent changes in legal documents. Voluntary attestation tests teachers' subject knowledge. High salaries are set for teachers who show 70-100% results. The participation rates and test results from 7 subjects are analyzed by subjects, schools, types, locations, and gender. Based on the interviews with teachers and experts, the problems registered during the voluntary attestation are revealed.

Legislative changes following the voluntary attestation pilot have been studied. The analysis mentions both the positive changes registered in the documents, as well as the existing gaps and uncertainties.

Suggestions have been made to make the voluntary attestation process more efficient.

Keywords: voluntary attestation of teachers, encouragement of teachers' work, pilot attestation tests, testing of teachers' subject knowledge